42° և 41°, և գետախառնուն՝քն սոցա են զ'40 ասսի-ճանաւ լայն. և 'ի 46° արևել. երկ. Բարիզու։

23. Գ Բարձրաւանդակ աղբերավայր է Գարապաղ, զորոյ շատս 'ի գետոց յիշեցաք անկանել յԵրասխ և 'ի Կուր. և ըստ դրից իւիցն՝ յարևմուտս արձակին Վեսի, Ջանախճը, Արբա (21). ընդ հարաւ՝ ամենայն յիշեալ գետքն 'ի Ճաղրուայ ցԲՀենտիլան, և ընդ արևելս՝ ամենեքեան որ իջանեն 'ի Կուր յԱղստեւոյ ցԳարգար. իսկ ընդ հիւսիս՝ վտակք մանուն՝քն արձակին 'ի Ծովն Գեղամայ. իսկ Ծովս այս յարևմտից կողմանէ 'ի լերանց Գեղամայ և մանուանս այլուստ՝ ընդունի գետակս ոչ սակաւ, և ինքն արձակէ յարևմտից հիւսիսոյ առու 'ի Հրազդան գետ։— Դ գետ արձակ բարձրաւանդակ է Բագրեւանդ, այսինքն անկ՝ըպետան Երասխայ և Արածանի—Եփրատայ, 'ի հարաւոյ Հայկական լեռնապարուն, ուր 'ի սահմանս Տիտենայ յՈսկի լերանց Ալատաղի բղխէ նախայիշեալն Հայկական Եփրատ կամ ԲՐԱԾԱՆԻ որ այժմ ՄՈՒՐԱՏ կոչի, և է արևելեան թեւ Եփրատայ, վասն որոյ և Եփրատ իսկ կոչի. բաղում են աղբերք նորա յ'8-8300' բարձու. զառաջինն Ջաղոր կոչի և 'ի հիւսիսոյ յարևմուտս դառնայ 'ի Նահիէ և յԱլաշկերտ գաւառս, յորոց և 'ի խալեռազեայ յարևմտից ընդունի վտակս յոքնաթիւ. զԷՔՈՒՆ և զայլս. և իջանէ ընդ հարաւ 'ի Խամուր, խաղալով ընդ խոխոմս լերանց. յարևմուտս կոյս խոտորելով մինչև 'ի Մելազկերտ, անտի ուղիղ ևս խաղայ ընդ արևմուտս ընդ լերանցամէջս, ցհիւսիսակողմն արևմտից դաշտին Մշոյ, ընդունելով յայմէն զԴՈՒՊԼՈ և զԳալէՔՈՒ և զՋարպՈՒՀՈՒր, որք յարևելեան հարաւային թիկանց Պինկեոլայ բղխեն, և յահեկէ զԲՈՊԻՆՈՒ կամ զՋուր Մելազկերտու։ Ի Ջարպուհուրայ և 'ի վայր դարձեալ սակաւ մի ընդ հարաւ իջանէ, և դառնայ անդրէն յարևմուտս, ընդունելով յահեկէ զՄԵՂՐՈՓԵՔՈՒ Մշոյ, և 'ի միջոյ լերանց ընդ լայն զառ 'ի վայր սահեալ իջանէ առ Կուրկուրաւ որ 'ի հարաւոյ Ս. Կարապետին Մշոյ, և փոքր մի խոնարհագոյն ընդունի զԿինճայ ջրոյն բարձրահոսան քարաւազն. ապա գրեաթէ ուղիղ ընթացիւք խաղայ յարևմուտս, հատանելով զբովանդակ լեռնադաշտս Դ Հայոց, և առ Փէպան Մատենիւ խառնի յարևմտեանն Եփրատ. ընկալեալ նախ յայմէն զՋուրս Ճաղըզլոյ, զԼէլի որ 'ի Պինկեոլայ իջանէ (և է Միու—Գայլ գետ ըստ նախնեաց), և զայլ բաղում վտակս քրդաբնակ լերանց Տուժիկայ և Մնձուրայ, Նոյնպէս և յահեկէ զգետակս դաւառին Խարբերդու. և լինին ամենայն ընթացք նորա իբրև 350 մղոն։— Յելից հիւսիսոյ աղբերականցն Արածանի-Եփրատայ՝ 'ի շամբէն Կոգայոլոի ելանէ Պուլ գետն օժանդակ Երասխայ, զոր նախ յիշեցաք (20)։

24. Ե Աղբերավայր բարձրաւանդակ է Աղձնիք, և ունի զաղբերս երկրորդի հզօր գետոյն Հայոց և զԵդեմայ, այսինքն է ՁՏԻԳՐԻՍ որ և Դիկլաթ և Շատ ըստ արևելեայց. որոյ ակունք ըստ արդեացս աշխարհագրաց են 'ի հարաւոյ Ծովք ՀՃԻՆ խարբերդու (18) իբր 'ի 4200' բարձու. այլ ինձ 'ի դէպ թուի զայն առաջս մի կամ օժանդակ ևեթ համարել, և զբուն աղբերակն խնդրել իբրև 50 մղոնաւ բացագոյն յարևելից հիւսիսոյ առ Սիվան Մատենիւ, հուսկ 'ի Մուրատ և 'ի Տարքուշ լերինս. քանզի նախնիք մեր ասեն յՈՒՐ գեղջէ հաշտենից բղխել զՏիգրիս, և ճապաղջոյ և կինճայ 'ի դէպ գան վայրք գաւառին, և ոչ Տրլքոյ՝ յորում Ծովքն լիճ։ Առ Ակլաս խառնին երկոքին վտակքն, այն որ 'ի մէջէն գայ և այն որ 'ի հիւսիսոյ՝ հանդերձ մանուամբք օժանդակաւք, և իջանէ գետն 'ի հարաւ 'ի Տիարպէքիր, և անցեալ ընդ քաղաքն գառնայ յարևելս և գրեաթէ ուղիղ ընթանայ 80 մղոն ցԲաղիշու գետն, վտակս յոլովս ընդունելով յահեկէ 'ի լերանցն Աղձնեաց, որ է Սասնոյ և խութայ, յորս հզօրագոյն է Պաղման—սու՝ յոր անկանին Սարամ և խուլ, և յելից սոցա Եղեղիսանէ, և 'ի սոցա ելից Բաղիշու-ջուրն՝ որ յարևմտից հարաւոյ լերանցն Վանայ (Նեմրուտայ) իջանէ. իսկ յայմէ ընդունի զԴէրն Մերդինայ. յետ ընդունելոյ զգետն Բաղիշու խոտորի Տիգրիս ընդ հարաւ արևելախառն մինչև 'ի Ջա—Սփի լեառն 'ի հարաւոյ Կորդուաց, ուր և սպառին սահմանք Հայոց, և անդ ընդունի յահեկէ զխաբուր գետ (Քովբար ըստ ոմանց). և նովին ուղղութեամբ ընթացիւ իջանէ 'ի Մուսուլ (Նինուէ) ձեւելով ընդ Եփրատայ զՄիջագետս. բայց յելից ընդ ջրոյն Բաղիշու խառնի 'ի նա և Սերբ (Սղերբա) որ և Պօհդան գետ, եկեալ յարևելից հարաւոյ Վանայ 'ի Մոկաց կողմանց 'ի Շատախ գաւառէ, և համարի նա արևելեան թեւ Տիգրիսի։ Ի Մուսուլայ և անդր զուգընթանայ Տիգրիս Եփրատայ մինչև 'ի խառնուրդս իւր 'ի Խուռնա, ընդունելով յահեկէն և զգետն Խաղիր. և զՄեծ և զՓոքր Զապ, յորոց մին յԱրատոսայ և միւսն յԱղբակայ թուին իջանել և լինին ամենայն ընթացք Տիգրիսի իբրև 1000 մղոն, 950 գոլով ցխառնուրդսն։

25. Զ Բարձրաւանդակ գետարձակ է Երկիրն Վանայ, և Ծով իւր շրեմարան յոլովից 'ի գետոց անտի. զի որք 'ի թիկանց լերանց Նորին յարևմտից և 'ի հարաւոյ իջանեն՝ խառնին կէսք յԱրածանի, որպէս Մելազգետն՝ որոյ աղբերք են 'ի Նեմրուտ լերին և բղխէ 'ի ստորոտից Նորուն, և կէսք 'ի Տիգրիս, որպէս գետն Բաղիշոյ. իսկ այլք մանուանք աւելի քան զ'40 թափին 'ի Ծովն յամենայն կողմանց, որպէս Աբծինոյ ջուրն 'ի հիւսիսոյ, Թոխ (Կիւզելտերէ) 'ի մէջ հարաւոյ, Ռոպան յարևելից հարաւոյ, խօշաբ հզօրագոյն քան զառաջինսն 'ի հարաւոյ արևելից, Անգլ կամ Շաֆրամայ ջուր, Մարդիպ, Գարա—լայ յարևելից, և Բերիր ջուր 'ի հիւսիսի արևելից։— Է. գետարձակ բարձրաւանդակ է պարզ Զակրոս և Վասպուրական լերանց, որք և անկ՝ըպետեն զՋուրս Վանայ և Տիգրիսի ընդ արևմուտս, և զԵրասխայ և զՈրմիոյ ընդ արևելս. 'ի Վասպուրական կողմանց բղխեն գետքն օժանդակք Երասխայ զոր նախ յիշեցաք Սարը—սու, Բերլիի, Կոտոր, Աքսու, և այլն (20). իսկ 'ի Զակրոսէ աւելի քան զ'20 գետակք իջանեն յՈրմեան Ծով յարևմտից Նորա, որպէս Զարի 'ի հիւսիսակողմն, Նաղլը—լայ 'ի հիւսիսոյ Որմի քաղաքի, ՇաՀԷր կամ ՇԷՀԷր 'ի հարաւոյ Նորա, Պալարդուշ խոնարհագոյն ևս։— Արտաքոյ բնիկ հայկական աղբերավայրեցս, Ը Արարատական գետք, յորոց ոմանք յՈրմեանն անկանին. 'ի